

Ամբաս Բիւրաս
Եմբագրութիւն «Փիիւնիկ» Ի
Աղեխանդրիա



S. Bural
Rédaction «PUNIG»
Alexandrie

ԵԳԻՊՏՈՍ

ԱՐՏԱՉԱՅՍԱՆ

Նր. 45
ՏԱՐԵԿԱՆ... 45
ՎԵՑԱՄՍԵՍՅ 25

Նր. 15
ՏԱՐԵԿԱՆ... 15
ՎԵՑԱՄՍԵՍՅ 8

ԲԱԺՆԵԳԻՆԸ
ԿԱՆՆԻԿ Ե

Ձեռագիր եւ չղար-
ձուիք

Փիիւնիկ

Կը ծախուի Մէկ գրուս ողջի

ԿՈՎԿԱՍ
ՏԱՐԵԿԱՆ ԲԱԼ. 6
Ազդեր կ'ընդուն-
ուին մասնաւոր
պայմաններով .

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Գ. ՏԱՐԻ

21 ՓԵՏՐՈՒԱՐ 1903

ԹԻԻ 27

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Կը յայտարարենք որ դադարեցուցած ենք թերթին առաքումը Արտասահմանի բաժանորդներէն անոնց որ, մինչև ցարդ չը վճարեցին իրենց պարտքը:

Գալով անուաններուն հրատարակութեան, տեսնելով վերջերս անոնցմէ մէկ քանիններուն վճարելու փութկոտութիւնը, առ այժմ յետաձգեցինք մեր որոշման գործադրութիւնը, սպասելով որ միւսներն ալ փութացընեն իրենց վճարումները:

ԵՐԿՈՒ ՎԷՐՔԵՐԸ

(Ձեռունի հասկար)

Այս օրուան քրօնիկին մէջ անցուցինք քանի մը տողերը նամակին, որ, Ձեթունէ զրկուած, կը կրէ 18|31 Յունվարի թուականը: Նամակագիրը, Միաց. Ընկ. Վարժարաններու մեր երբեմնի չըջանաւորտ պարօններէն վե-

րապրող ուսուցիչ մը, — միւս ընկերա կիցները շարգուեցան կամ ինկան վերջին պատերազմին —, պարզելէ ետքը քրիստոնեայ Գայմազամին անճարակութիւնն ու պաշտօնին անկարևորութիւնը, Ս. Աստուածածնի վանքին մէջ մեր երանեալ Կարապետ եպիսկոպոսին անփոփոխ կենցաղավարութիւնն ու առածային անտարբերութիւնը մեր աղջ. գործերուն համար. լեռնցիներուն՝ հեզնութեան մօտեցող համակերպիլը նորամուտ ռեժիմին այսպէս շարունակութեանը, դատապարտելէ ետքը Պոլսոյ Ազգ. Պատրիարքարանին — որովհետև ութ տարի կայ, Սիսի Աթոռը թափուր է — քարացած անզգայութիւնն ու անհոգութիւնը Ձեթունի և անոր հարկուտ որբերուն նկատմամբ. նկարագրելէ ետքը խեղճ, անտերունչ ու անպատուար որբերուն լքումը, կը գուժէ ծաղկախիսին երևումը, ըրած աւերը քանի մը շաբաթներէ ի վեր: Ու այսպէս կը վերջացընէ նամակը.

Ամբողջ Գեղը սուգի մէջ է. ամեն օր 40-50 մանուկ կը մեռնի ծաղկախիսէ. թշուառութիւնը գրիչով չը

կրնար Ակարագրուիչ. ո՞վ կը խորհի
արդեօք գեղացոց վրայ... եւնս:

Ահա՛ վէրք մ'ալ, առաջին վէր-
քին վրայ, որ դեռ բաց է:

1895-1896ի կռիւր, ձեռք չը բե-
րած ո՛չ առանձնաշնորհեալ վարչու-
թիւն մը, ո՛չ տուրքերու թեթեացում
մը, ո՛չ ալ գեղացիներու կացութեանը
լաւացումը, կտակեց 500է աւելի մատ-
ղաշ որբեր, Ձեթունէ ու շրջակայ
գիւղերէն, որոնք այսօր լքուած կը
մնան, չը գտնուելով աշխարհիս մէջ
գոնէ մէկ Որբախնամ Ընկերութիւն,
որ կազմուած ըլլար Ձեթունի համար:

Բայց այս վէրքը դեռ չը գոց-
ուած՝ ահա՛ կը բացուի ուրիշ մը, Մաղ-
կախար, մանուկներուն դահի՛ճը...

Օրը 40-50 մանուկներ, ապագայ
ծաղիկները հայրութեան, ծաղիկի
կեանքը դեռ չապրած, ծաղկախոտ կը
մեռնին:

1890ի ամառն էր, Մարաշի Սալիհ
բաշային զրկած բժիշկը, Տօգթ. Ապու-
ճան, թունաւոր պատուաստով, քանի
մ'օրուան մէջ հնձեց 554 մանուկներ,
բոլորը մանչ, որոնք պիտի ըլլային
մարտիկները հայկական Սեւ Լեռին,
եթէ հիմայ ապրէին: Լեռնցիները մին-
չև հիմա կը յիշեն այն սև տարի՛ն,
Սալիհ բաշան, Տօգթ. Ապուճանը,
Պատուաստը, մանուկներուն Ջարդը...:

Արդ, ո՞վ պիտի կրնար համոզել
զիրենք, յամառ լեռնցիները, թէկուզ
ձրի, պատուաստել տալ իրենց մա-
նուկները, ցորչափ դեռ թարմ է դառն
յիշատակը 1890ին, Մանկասպան Պա-
տուաստին, Պետական Բանօին դռնե-
ներուն խորտակմանը, Ձեթուն քաղ-
քին ու Ջօրանոցին միջև ժամերով
փոխանակուած գնտակներուն, լեռը
քաշուած Ապստամբներուն, ԵՕԹԱՆԱ-
ՍՈՒՆ ԵՐԿՈՒՔԻՆ բանտարկութեանը,
ևն, ևն...:

Հետեալաբար, Գեղը սուգի մէջ է
այսօր, ամեն օր 40-50 մանուկ կը
մեռնի, ու չը կայ մէկը, որ հասնի
առաջըն առնէ ազէտքին:

Պատերազմին Որբերը, Մաղկախ-
տին Ձոհերը՝ ահա՛ երկու վէրքեր,
որոնց արագ դարման մը գտնելու
պարտականութիւնը կը ծանրանայ ը
սփիւռու երկրագնդիս ցանցնուած Հայ-
ութեան բոլոր անդամներուն վրայ:

Կոչում կ'ընենք ուրեմն նախ մեր
եգիպտոսին հայ դաշմանականութեանը,
հինին թէ նորին. կոչում կ'ընենք մեր
մայրերուն ու հայրերուն, մեր քոյ-
րերուն ու եղբայրներուն, կոչում մեր
օրիորդներուն ու տիկիներուն, թէ՛
եգիպտոսի և թէ՛ Արտասահմանի, յի-
շեց'ելով իրենց՝ Քամառ Քաթիպայի
անմահ երգին հետեւեալ տողերը.

«Կ'աւէի հայոց օրիորդներին.
Մախեցէ՛ք հագի ձեր քանկ շորեր.
Թողէ՛ք պանուսանք, զարդ, մարգարիտներ,
ժանգոսած ու գուլ են մեր քրերը.
Տրէ՛ք բեհեգեայ մեզ ձեր շապիկը,
Որ մեզ փաքաքեմ մեր մարմնու վէրք.
Վիրակապ հիւսէ՛ք դուք ձեր մազերից,
Էսպէս յայնցեցէ՛ք դուք մեզ ձեր սեր:»

Թող այս կոչը ծառայէ իբր ազ-
գարայութիւն, խոր քունը խորգացող
խղճմտանքներու, իրենց հերոսի անի-
րաւ համբաւովը հանգիստ ապրող թու-
լամորթ թղուկներու, և. մանաւանդ
Ձեթունի առաքելութեամբը պարա-
պող անցեալ, ներկայ ու ապագայ գոր-
ծողներուն...:

Ու եթէ ներկայ կոչը գտնէ փա-
փագուած արձագանգը մէկէ աւելի
ազնիւ սրտերու մէջ, պիտի առաջար-
կենք անխիղապէս կազմել Յանձնա-
խումբ մը Ձեթունի համար, որուն
պաշտօնն ըլլայ ձեռնարկել անյապաղ
հանգանակութեան մը, միջազգային
չըջանակներու մէջ ալ տարածելով
զայն, կարենալ գոյացընելու համար

պատկառելի գումար մը, որ ծախսուի
1. Վստահելի բժիշկի մը ձեռքով պատ-
ոււաստել տալու համար մանկիկները.
2. Պատասպարելու, ապրեցընելու և դաս-
տիարակելու համար 500 սրբերը:

Յանձնախումբը միանգամ կազ-
մուած, դիւրին է շուտով հիմնել ըն-
կերութիւն մը, Արտասահմանի բոլոր
հայաբնակ տեղեր ստեղծելով մասնա-
ճիւղեր, շաբաթական ամենաչնչին վը-
ճարումներով յաջողիլ ձեռք բերել
գումար մը, որուն սոկոսովը պիտի
կարելի ըլլայ հրաշքներ գործել:

Նիւթերուն առատութիւնն ու տե-
ղին անձկութիւնը ստիպեցին մեզ յա-
ջորդին յետաձգել ՎԵՂԱՐԱՒՈՐ ՀԱ-
ՍԱՌՈՒՆ և ԸՆԿ. հրատարակութեան
չարունակութիւնն ու վերջը:

ԱՍԻՈՒԹԻ ՀԱՅՆԵՐԸ

Ո Ւ

ՊԱՐՍԿԱՀԱՅ ԳՍՂԹԱԿԱՆՆԵՐԸ

Կարնոյ երկրացունցը՝ ցնցեց մեր
Եգիպտոսի մէջ անկիւնը, Իպրահիմիյէ
Շարգիյէ քաշուած ամբ մ'ազնիւ հայ-
րենակիցներու սրտերը. անս'նք եզան
առաջինը պատասխանողներէն մեր կո-
չերուն ի նպաստ Հայաստանի մայրա-
քաղաքին արկածեալներուն, որոնց
համար բուսական կարևոր գումարներ
հանգանակուեցան հոս, նախաձեռնու-
թեամբ և ջանքերովը տեղիս Տեարց
Կամսարական Եղբարց և անմիջապէս
յանձնուեցան արկածեալ արկղին:

Ուրախութեամբ կ'աշնորհուրենք
մենք այդ գէպքը, գալարազուարճ
Օասիս մը մեր Եգիպտոսահայու հայրե-
նասիրական զգացումներու Սահարա-
յին մէջ:

Իսկ այս անգամ Պարսկահայ Գաղ-
թականներուն ազազակը կը հասնի
Ասիոյթ, Վերին Եգիպտոսի մեծ քա-
ղաքը, ուր անմիջապէս կը ձեռնար-
կուի հանգանակութեան:

Յատուկ գաղափար մը տալու հա-
մար, կը հրատարակենք հետեւեալ նա-
մակին հետ հանգանակութեան ցու-
ցակը:

յԱսիոյթ 1903 Փետր. 17

Մեծպատիւ

Տիար Սմբատ Բիւրաս

Խմբագիր «Փիւնիկ» Շաբաթաթերթի
յԱղեքսանդրիա

Պատուական Բարեկամ,

Ամսոյս սկիզբէն սկսեալ՝ Վերին Ե-
գիպտոսի մէջ աստ անդ ցրուեալ հայ ժո-
ղովրդեան այցելու Հովուութեան պաշտո-
նով տեղս (Ասիոյթ) հասայ, ուր դոսայ եօ-
թանասունի չափ հայեր, որոնք քարոզ մը
լսելու փափաքով ստիպեցին ինձ սպասել
մինչեւ կիւրակէ: Ծարաւի երկիր մը ինչ-
պէ՞ս ջրի կը կարօտի, այնպէս ալ անդոյս
ժողովուրդը կարօտ էր լսելու կենաց բանի
եւ միանգամայն ազգային կենաց վերա-
բերեալ խօսքերը, որմէ ոգեւորեալ՝ ի
Պարսկաստան գաղթող հայոց համար 21
քսաննամէկ անգլիական լիբայէն աւելի
գումար մը հանգանակեցին, որ Թաւրիզու
Հայուհեաց Միացեալ Ընկերութեան միջո-
ցաւ մատակարարուի՝ նուիրատուաց նպա-
տակի համաձայն:

Այս առթիւ իմ խորին շնորհակալու-
թիւններս եւ օրհնութիւններս կը մատու-
ցանեմ ի դիմաց հայ գաղթականութեան
նուիրատու ազգայնոց:

Իցի՛ւ թէ՛ այս գեղեցիկ օրինակին հետե-
ւէին արտասահմանի մէջ ազատօրէն ապրող
բոլոր հայերն ալ. իցի՛ւ թէ՛ հարուստ եւ
միանգամայն ձեռնհաս ազգայինքն ալ հե-
տեւէին Տիար Սիմօն Սարգիսեանի գովե-
լի օրինակին, որ ոչ միայն հիւրասիրեց
մեզ հետ եւ ունկնդիր ժողովրդեան, այլ եւ
խանութէ խանութ շրջելով՝ յորդորեց բա-
ցակայ գանուողներուն, որ մասնակցէին
այս նուիրական հանգանակութեան:

Քաջայոյս եմ թէ ներփակեալ ն ուի-

րատուաց անուններն ալ Փիւնիկի համար-
ներէն միով պիտի հրատարակէք:

Հովուական այցելութիւններս աւար-
տելէ յետոյ, կը յուսամ թէ ապաւորու-
թիւններս ի գիր առնուին եւ վերին եգիպ-
տոսի Հայոց կեանքէն տեղեկութիւն ունե-
նալու փափաքող ժողովրդեան ներկայա-
ցուին:

Ընդունեցէք սիրալիր ողջոյնս

Մնամ Ազօթարար

Ա. ՔՀՆՅ. ՇԱՂՕՅԵԱՆ

Ի նպաստ Հայ գաղթականութեան
յԱսիութ՝ հանգանակեալ գրամի գու-
մարը, քարոզչութեամբ և նախագա-
հութեամբ Աշտ. Աւետիս Քահանայ
Շաղօյեանի ի Տան Մեծ. Սիւնիս ալբա
Սարգիսեանի, 1903 Փետր. 15:

ՆՈՒՒՐԱՏՈՒՆԵՐԸ

Ղ. Ո.

Աւետիս ՔՀՆ. Շաղօյեան	200
Սիւնի Սարգիսեան	400
Տիգրան Մխիթարեան	100
Տիգրան Լոյսպարոնեան	100
Հայկազուն Տր. Յովհաննէսեան	50
Աւետիս Պըլլըքեան	50
Յակոբճան Պօնճուքճեան	40
Խաչատուր Գերձազեան	60
Փիլիպպոս Քէչեան	40
Սարգիս Պապիկեան	20
Կիւլպէնկ Թօսունեան	20
Մկրտիչ Քէչեան	20
Մհի. Կարապո. Չիթճեան	20
Միքայէլ Կիւլեան	40
Ալիքսան Մարտիրոսեան	40
Ալիս և Հայկանոյշ Պօնճուքճեան	10
Մաքսուտ Կարապետեան	20
Ապտալլա Սուքկարի	50
Միլթիատի Մետաքսիայ	100
Միքանի անձինք	100
Մելքոն Նաճարեան	10
Նիքօլա Առմանթիա	30
Չախարի Ենօտէ	10
Ալիքսան Խանարեան	25
Միխայէլ Պօղոս	40
Սուլէյման Թօտորաս	20

Հիւսէյին Կիրէ	10
Խըլլէ Կէրտէս	10
Մանուէլ Հէքիմեան	50
Կարապետ	50
Եղիա Յովսէփեան	25
Բարսեղ Ժամկոչեան	60
Գառնիկ Սրմսարեան	20
Խաչատուր Սիւսճեան	100
Գէորգ Զաքրճեան	50
Եղբարք Սարբեան	30
Սաեփան Հէքիմեան	20
Վիչէն Սարբեան	40
Մսակաճառ Բաւլօ	20
Նպարավաճառ Նիգօլի	10
Տիկին Թէնսիֆ Քէչեան	10
ՈՅ	5

Ընդհ. գումար 22 անգ. ոսկ. Ղրշ. Ողջ 2145

Ահաւասիկ եկեղեցական մը Տ.

Աւետիս Շաղօյեան, որով իրաւունք
կունենան հպարտանալու նախ իր հայ-
րենաշիցները, յետոյ և աւելի՛ հայ
ժողովուրդը. ահաւասիկ ունեւոր հայ
մը, Տիար Սիւնի Սարգիսեան, որ ո՛չ
այնչափ իր ձեռքին տուրքովը, որչափ
իր ազնիւ շանքերուն ուժովը կուգայ
ստեղծել համակրանքի հոսանք մը թէ՛
իւ անձին և թէ՛ իր ազգատոհմին
չուրջը: Տեսէք, այքէ անցուցէ՛ք ցու-
ցակը, պիտի տեսնէք հոն անուններ
ալ, որոնք պիտի կարմրեն են շատերու
երեսները...:

Օրինակ առնենք Ասիութի ազնիւ
Գաղթականութիւնը. Գահիրէ, Աղբը-
սանգրիա, Չակաղիկ, ևն. ե՛րբ պիտի
ձեռնարկուի այսպիսի հանգանակու-
թեան մը:

ՔՐՈՆԻԿ

— Վսեմ. Արամիւս քաշա Բար-
թոյ, նկատելով որ տեղիս Աղբատա-
խընամի պիւտճէն չը կրնար լիովին

գոհացրնել դիմող կարօտեալներուն
և վերջերս աւելցած նորեկներու պէս-
քերը, հաճած է իր արդէն յատկացու-
ցած տարեկան 60 սկիի նպաստը
բարձրացրնել 100ի. դումար, որուն
հաւասարը կը վճարէ տարուէ տարի
Վսեմ. Գօղոս բաշա նուպար:

Կը յուսանք թէ՛ Վսեմ. Աբրահամ
բաշա Բարթողի մարդասիրական առա-
տաձեռնութեան այս գեղեցիկ օրինակը
պիտի ունենայ հետեւողներ և թէ՛
Ս. Ղ. քատախնամին Յանձնախումբը քա-
ջալերուած, պիտի բազմապատկէ իր
ջանքերը, նախանձելի գիրքի մը
մէջ դնել կրնալու համար սոյն կա-
րեոր հաստատութեան պիւտճէն:

— Ռուսիան ու Աւստրիան եւրո-
պական Գօնկրէ մը գումարել պիտի
տան, եթէ Դուռը չը գործադրէ ան-
կեղծօրէն մակեդոնական բարենորո-
գումները:

Բեթրպուրկէ անգլիական թեր-
թերուն իմաց կուտան թէ Ռուսիան
երբէք չուզեր Մակեդոնիոյ համար
ինքնավարութիւն կամ անոր պէս բան
մը: Ռուսիան կը կարծէ թէ ինքնա-
վարութիւնը Մակեդոնիոյ մէջ պիտի
գրգռէ նախանձորգութիւնը Սերպ,
Պուլկար և Յոյն երեք ցեղերուն որոնց
ամեն մէկը պիտի փորձէ միւսին ոտքը
առնել: Ի վերջոյ Ռուսիան պիտի
ստիպուի միջամտել. այն ատեն պիտի
սկսին բարդութիւններ, որոնցմէ խիստ
կը խորշի Յարին կառավարութիւնը
թէ՛ Պաւլքաններուն հաւասարակշու-
թեանը, թէ՛ Եւրոպային խաղաղու-
թեանը, թէ՛ իր խաղաղութեանը սե-
փական շահին ու իր գերակշիռ ազ-
դեցութեանը համար:

— Ֆերիս քաջան հրաժարած է
կըսուի, հակառակ Պուլսոյ հերքումնե-
րուն: Տէրի թէյեկրաւի թղթակիցը կը
հաւաստէ թէ Մեծ-Եպարքոսը հրա-
ժարականը տուած է, բայց Սուլթանը
հրամայած է տեղը մնալ:

Չը մտնանք որ այս Տէրիտը Մա-
կեդոնական բարենորոգումներու Յանձ-
նաժողովին նախագահն էր:

— Ձերունէ այս շաբթուան մէջ
ստացուած նամակ մը կը հաղորդէ հե-
տեւեալ տխուր լուրը:

«Ամբողջ գեղը (*) սուգի մէջ է. ամեն
օր 40—50 մանուկ կը մեռնի ծաղկախտէ.
Թշուառութիւնը գրեջով չը կրնար նկարա-
գըրուիլ. ո՞վ կը խորհի արդեօք Գեղաց-
ւոց վրայ... ևն»:

(Կարդալ Խմբագրականը):

— Ռեկօրն, տեղիս եւրոպական
կարևոր օրաթերթը, իր փետր. 16ի
երկուշաբթի օրուան թիւին գլխաւը
դրած է խմբագրական մը «Հայաստանն
ու Մակեդոնիան» վերնագրով, որուն
մէջ կը յայտնուի անկաշկանդ ու կորո-
վի գատողութիւնը, ազնիւ սիրտն ու
բարձր հոգին մեր մեծանուն պաշտօ-
նակից Պ. Ռ. Գանիվէի, որ կուգայ
այնքան փառաւոր կերպով աւելցրնել
թիւը Հայաստաններուն, որոնք այսօր,
հարստահարուած Հայաստանին ու Մա-
կեդոնիային համար կը ջանան ձեռք
բերել իբրև մարդ ապրելու ամենա-
պարզ իրաւունքը:

Տեղիս հայ հասարակութիւնը չը
պիտի դանդաղէր սեղմել այն ձեռքը,
որ հրապարակ նետեց, այս հոգեբա-
նական ըոպէին, այնքան սրտապնդող
որքան ազատաշունչ այդ յօդուածը:

Ապրիլն Գանիվէները:

ԼԷՕՐՕՐԲԷՆԻ մէջ կը կարգանք.
Թուր կուսակցութեանց վերա-
բերող մարդերէ բաղկացած խումբ մը
կազմուեցաւ մեծ հաւաքոյթ մը սար-
քելու համար ի նպաստ Հայաստանի
ու Մակեդոնիոյ հարստահարուած բնա-
կիչներուն:

Փետր. 1ին, Բալէ-Պուրպօնի մէջ

(*) Ձերունցիք առհասարակ Գեղ կը
յորտրջեկ իրեկց աւանը. իսկ իրեկի՛ գե-
ղացի կը կոչուի:

Պ. Տ'էդուրնէջ սր Գօնսդանի նախա-
գահութեան տակ տեղի ունեցաւ նա-
խապատրաստական նիստ մը. ներկայ
էին Պ. Վհգոր Պերար, սր Գօնդանսօն,
Բիէր Բիյեար, Անարօզ Լըրուա Պօ-
չիէօ, Ֆ. Բրեսանսէ, Բօլ Վիօշէ, Տը-
րաժօս, Վանսալ եւ Սէնար:

Ահա՛ որոշմագիրը.

Հաւաքոյթը կը հաստատէ դիւա-
նին կազմուիլը հետեւեալ կերպով. Պ.
Տ'էդուրնէջ սր Գօնսդան, նախագահ.
Պպ. Տընի Գօշէն եւ Բրեսանսէ, Փոխ-
նախագահներ:

Որոշուեցաւ անհատական հաւա-
քոյթ մը սարքել փետր. 12ին, ժամը
8 1/2ին, ի նպաստ Հայաստանի ու Մա-
կեդոնիոյ հարստահարուած բնակիչ-
ներուն:

Ծանուցում պիտի չ'ըլլայ. Հրա-
ւիրագրեր պիտի ուղղուին բոլոր ան-
դամներուն Խորհրդարանին ու Համալ-
սարանին, Ուսանողներուն Ընկերակ-
ցութեան, Լիւսէնպօլսի Կաճառին ու
զանազան ընկերակցութեանց որոնք
պիտի նշանակուին դիւանին անդամ-
ներուն կողմէն. Պ. Գօշէն ու Պ. սր
Բրեսանսէի քովը պիտի գտնուին ար-
դէն հաւասար թիւով հրաւիրագրեր:
Բեմասրահը նստելու պիտի հրաւիրուին.

ՊՊ. Վ. Պէրար, Տ. Գօշէն, Լ. Գօնդան-
սօն, Տըլաֆօս, Էդիէն, ա' Էդուրնէլ, աը
Գօնսգան, Ժ. Տէչան, Ժ. Ժօրէս, Բ. Բիյեար,
Տը Մէօն, Է. Լամի, Ա. Լըրուա—Պօլիէօ,
Լօքրուա, Աբբա Լըմիը, Լավիս. Ժ. Բարի,
Ֆ. աը Բրեսանսէ, Ռուանէ, Սանպա, Սէնար,
Բ. Վիօշէ, Ա. Վանտալ, Ժօրթ Բիգօ, աը
Դուրսէլ, Ռիպօ, Պէրթլօ, Երէց Մուներէ,
Տիրացու Բիզանի, Պրէալ, Է. Մ. աը Վօկէ,
Դարսէ, Սենտօպօս, Կրուազէ, Ֆրանս, Բօլ
Տէչանէլ, Մովակալ Գիւլըվրէլ, Հեքօլ, Էս-
գիւտիյէ, Մովակալ աը Լաժալ, Կլէմանսօ.
Հայր Շարթթան, Լիյօն Գաէն, Տիկին Սէվ-
րին, Ա. Մէյիէ, Կոմս ա' Օնէյ, Այնար:

Ուրիշ հրաւիրագրեր պիտի գրկուին
նախագահին ու երկու փոխ-նախա-
գահներուն խորհրդակցութիւններէն
եւրը:

Միահամուռ ձայնակցութեամբ մի-
այն պէտք է նշանակել հրաւիրելիները:

Նախագահն ու Փոխ-նախագահ-
ները պիտի շինեն վերջնական ցանկը
ճառարիտներուն, որոնք պարտին խօսք
առնել, խնամ տանելով պահպանելու
հաւասարակշռութիւնը՝ ներկայուած
կարծիքներուն միջև:

Ատենաբանները պէտք է ներշնչ-
ուին Յանձնախումբին այս որոշումովը.

Յարակցութիւն ու անբաժանելի-
ութիւն հայկական ու մակեդոնական
հարցերուն, առանց մոռնալու թուրք
բնակիչներուն վիճակն ալ ու բռնելով
բնարան:

1. Պաշտօնական հրատարակու-
թեանց մէջ ցուցադրուած դէպքերը.

2. Պերլինի դաշնագրին պայմա-
նադրութիւնները.

Յանձնախումբը կը համաձայնի
խմբագրութեանը համար հրաւիրագրի
մ'ու օրակարգի մ'որ ներկայուի 12
փետրվարի նիստէն վերջը. այս օրա-
կարգը յատկապէս պիտի յիշեցնէ
Պերլինի դաշնագրին պարտաւորու-
թիւնները:

Կ'որոշէ իր մերձաւոր գումարումը
փետր. ի շաբաթ օրը ժամը ճիշդ
2ին, Բալէ—Պուրպօնի մէջ (Ա. Դիւան):

Ներկայ որոշմագիրը պիտի կոչի
տեղ ծառայէ առաջիկայ շաբաթին
համար, ճիշտ ժամը 2ին:

Տեսնուած ու վաւերացուած.

Նախագահ Բարտուղար

Տ'էդուրնէլ սր Գօնսդան Լիւսօլիգ սր Գօնդանսօն

Սոյն ցոյցին իրենց նեցուկը տալ
փափագող անձերը, առանց կուսակ-
ցութեանց ո'ւ է խորութեան, պիտի
բարեհաճին իրենց հաւանութիւնը նա-
խագահին զրկել առաջիկայ շաբաթէն
առաջ, 131, ռիւ սը շա Դուր, Բարիզ
16գ, կամ փոխ-նախագահներէն մէ-
կուն:

Յոյսը պիտի ըլլայ ա'յնքան աւելի

հոյակապ ու ա՛յնքան աւելի ազդեցիկ որ աւելի լաւ պիտի յայտ բերէ օտարին առջև, վեհաշունչ բողոքի մը մէջ բոլոր կուսակցութեանց միութիւնը:

Այս գումարումը տեղի ունեցած պիտի ըլլայ ամս.յս 15ին կիրակի օրը:

ՊՕՂՈՍԵԱՆ ԱԶԳ. ԵՐԿ.

ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԸ

Այն վարժարանաց Պատ. Հոգաբարձութիւնը գեղեցիկ գաղափարը յղացած էր տեղիս կրթասէր ու միանգամայն դիւրակեցիկ ազգայիններուն դիմելու և հանգանակութեամբ հաւաքելու գումար մը, որ ծառայէր նոյն վարժարանաց կարօտեալ երկսեռ աշակերտներուն համար վայելուչ հագուստներ պատրաստելու Ամանորին ու Ս. Մինդեան առիթներովը:

Այդ հանգանակութեան արդիւնքը տեղիս հասարակութեան հազոր գելու նպատակով խմբագրութեանս զրկուած է հետեւեալը հրատարակուելու համար.

Աղեքս. 5 Յունվար 1903

Հոգաբարձութիւն

Պոլ. Ազգ. Երկ. Վարժարանաց

Աղեքսանդրիոյ

Ազգային վարժարաններս յաճախող ուսանողներէն 150է աւելի կարօտեալներու հանդերձեղէնի պատրաստութեան համար Հոգաբարձութիւնս պարտաւոր կզգայ ծանօթ բարեսէր անձնաւորութեանց նիւթական օժանդակութեան սպաւիւնել, կարենալ մասամբ գոհացում տալու համար անհրաժեշտ պէտքերուն:

Հոգաբարձութիւնս վստահ է թէ իր այս կոչը համակրութեամբ պիտի ընդունուի, նկատի ունենալով մանաւանդ որ սոյն կարօտ ուսանողներէն մեծամասնութիւնը որբեր են՝ գրեթէ բոկոտն եւ զուրկ տարրական հագուստէ:

Հանգանակութեան գոյացած գրամին

մէկ մասն ալ պիտի յատկացուի վարժարանիս մատենադարանին ճոխացման:

Ի Դիմաց Հոգաբարձութեան

Յ. Պաղասաղը Կ. Գ. Տէրվիչեան

(ԿՆԻՔ)

ՆՈՒԻՐԱՏՈՒՆԵՐԸ Գ. Ո.

Պօղոս բաշա Նուպար	2500
Տիկին Ե. Ա. բաշա Բարթոլ	1000
Աբրահամ բաշա Բարթոլ	2500
Միհրան Խան Գալֆաեան	1000
Միքայէլ պէյ Րէիզեան	975
Ոճ	200
ՈՃ	195
Տիար Գէորգ Սարգիսեան	292, 5
Տեարք Կամսարական Նղբարք	195
Տիար Պօղոս Յակովբեան	195
» Կիւլպէնկ-Թիւրապ	195
» Գառնիկ Զպուքճեան	97, 5
» Ժօզէֆ Ալեքսանդր	97, 5
» Յակովբ Ուղուրլեան	97, 5
» Լևոն Նիզամեան	97, 5
Ոճ	97, 5
Տիար Մ. Յովհաննէսեան	97, 5
» Միհրան Թէլեան	50
» Միհրան Պէօրէքեան	20
» Թովմաս Թօփուզեան	20
» Խոսրով Բէլագօֆ	20
» Յարութիւն Մուղալեան	20
» Համբար Մուղալեան	20
» Տիգրան Զամբերթէն	20
» Գարակէօզեան	20
» Միսաք Թումայեան	10
» Կարապետ Տէրվիչեան	292, 5

10325

Պարտք կը զգամ հրապարակաւ շնորհակալութիւննեցս յայտնել վերոգրեալ կրթասէր ազգայիններուն, որ մեր դիմումներուն պատասխանեցին և որոնց նուիրատուութեանց արդիւնքովը կրցանք ուրախացընել մեր կարօտեալ մանկտին:

Ի Դիմաց Հոգաբարձութեան

Աղեքս. 18 Փետր. 1903 Կ. Գ. Տէրվիչեան

Ա Չ Դ Ե Ր

Անգլիերէնի մասնաւոր դասեր աւանդողը— որուն ծանուցումը ժամանակէ մ'ի վեր կը հրատարակուի Փիւնիկի մէջ — կը շարունակէ իր դասախօսութիւնները Պէուլիձի մէթոտով. հիմայ ունի բաւական թիւով աշակերտներ. կը խոստանայ շաբաթը միայն 4 անգամ դաս առնողին սովորեցնել 5-6 ամսուան մէջ դրել, կարգալ ու խօսիլ:

Մանրամասնութեանց ու պայմաններուն համար դիմել Փիւնիկի խմբագրութեան:

ԱՐՆԻՆԵԼԵԱՆ ՃԱՐԿԱՐԱՆ

Մէնչիյէյի հրատարակիչ, Բասաժ Բրէնս Սէյֆէտտին պէյ, թիւ 50 լուսնութիւն:

Ամեն տեսակ արեւելեան կերակուրներ, և անուշեղէններ, մասնաւորաբար Տէօնէր եւ Շիշֆէպպի:

Այս ճաշարանի վարիչներն են Տեարք Կարապետ Տիրհէմէտան և Սարգիս Հիւսէյինճեան

Բաժանորդագրութիւն կ'ընդունուի դիւրամառչելի պայմաններով, կանխիկ վճարումով: Գիներուն չափաւորութեամբը կրնայ մրցիլ օտարներու նման հաստատութեանց հետ:

Մինչև ցարգ հոն յաճախող պատազգաւիչներուն հետոջհետէ աճող թիւը պերճախօս վիսյութիւն մ'է արդէն սոքս ճաշարանին մէկէ աւելի առաւելութեանցը:

Յաճախեցէ՛ք Արեւելեան ճաշարանը:

ԱՐՄԵՆԻԱ ԼԻՆՁԻ

Անգլիերէն հոյակապ երկին կառուր մասերուն ամփոփումը, հայերէնի թարգմանումը, գեղեցիկ հատոր մը, 157 էջերով, հեղինակին պատկերով ու ինքնակենսագրութեամբ: Գրեց Պ. Տօնապետեան. Գինն է 3 ֆրանգ.

Դիմել.

Mr. Donabedian
177 Godolphin Road
Shepherd's Bush London.W.

ՏՐ . ՍԱՐԳԻՍ Բ. ԺԱՐԿՈՉԵԱՆ

Ամերիկեան վկայեաց բժիշկ

Սեսուքիս փողոց թիւ 1

«Փար ս'Աշէֆասևսրի»ի սպարանին վրայ ի Ա. յարկը

Տօղթէօր Սարգիս Բ. Ժամկոչեան պատիւ ունի ծանուցանել Տեղիս արդոյ հասարակութեան թէ՛ ինք հաստատուած է վերջնապէս քաղաքիս մէջ ու պատրաստ է դարմանելու ընդհանուր հիւանդութիւններ: Մասնագիտօրէն ու Ամերիկայի կատարելագործուած ու նորագոյն բժշկական փորձերով ու սխաղէմով կը բուժէ բանաւանդ արեան վերաբերեալ զանազան ախտերը:

Հիւանդները կ'ընդունին ա լեւն օր կէս օրէն ետքը ժամը 2-5: Իսկ Չորեքշաբթի և Շաբաթ օրերը առտուան ժամը 9-11 ձրիաբար կը դարմանէ իրեն դիմող ազբառ հիւանդները: